

անոր եղբորորդին՝ Սահակ եպիսկոպոս Գառնեցի: Յաջողեցան հեռացնել հրապարակէն Պօղոս վարդապետը, որ ստիպուեցաւ առանձնանալ Անապատ (Դաւր. 283, 293), ուր եւ վախճանեցաւ 1620ին (Դաւր. 283): Նոյն տարւոյն վախճանեցաւ նաեւ Սարգիս պարօնտէր (Դաւր. 260): Հեռացան Մեծ Անապատէն Ներսէս Մոկացի, որ Լիմի մէջ նոր վանք մը բացաւ. իսկ Թումա եպիսկոպոս Տ. Կիրակոսին հետ զնաց «յերկիրն Քչտաղս մերձ ի զեօղն Հօշանց». հոն ալ փոխեցաւ յաստեացս Տ. Կիրակոս՝ 1621ին (Դաւր. 260). իսկ Դաւիթ եպիսկոպոսի մահը ստորահեցաւ 1643ին Չարեքի անապատին մէջ. տապանադիրն է (Կոստանեանց՝ Վիմական Տարեգիրք, 183).

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ

ԴԱԻԹ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԹՈՒԻՆ ՌՂԲ

### Առանձին մնաց Մովսէս:

Հակառակորդներն «այնքան նեղ արկին զնա եւս, մինչ որ ինքն Մովսէս վարդապետն զիւր փրկունն եւ զգաւազանն եւ զխալիչէն առաքեաց առ Մելքիսեթ կաթողիկոսն ասելով. Որովհետեւ ոչ կամիս զքարոզութիւնն մեր, ահաւասիկ ա՛ռ ի քեզ զիշխանութիւնն մեր եւ մեք լուալ զազարեմք ի քարոզելոյ. եւ ընդ այդ թէ իցեն մեղք ինչ՝ դու տացես զպատասխանի Աստուծոյ» (Դաւր. 293): Ինչպէս Չաքարիա Սարկաւազ լսած է, Մել-